

ԱՒԵՏԱԲԵՐ


Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններու

27 Մարտ 2016

ԺԵ. Տարի

Թիւ 14

ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ



ՅԱՐՈՒԹԵԱՆ ՃԱՇՈՒ ԸՆԲՐԱԿԱՆ ԱԶ

Փառքի թագաւոր Քրիստոսը, որ մեզի համար սուրբ Կոյսէն մարմնացաւ, խաչին վրայ համբերելով. միաբան երգով բարեբանենք:

Որ յանձն առաւ երեքօրեայ թաղումը, յարութիւն առաւ մեռելներէն իշխանութեամբ. միաբան երգով բարեբանենք:

Մեծ զօրութեամբ դժոխքի դռները խորտակեց, իր եկեղեցին զգեստաւորեց մեծ վայելչութեամբ, միաբան երգով բարեբանենք:

ՄԵՍԵՂԻ (Սաղ 1,1-2,1-3,2)

Երանի՛ այն մարդուն, որ ամբարիշտներու խորհուրդին չի հետեւիր, մեղաւորներու ճամբան չի բռներ եւ չարերու աթոռը չի նստիր:

Յեթանասները ինչո՞ւ կը խռովին եւ ինչո՞ւ սնտոի բաներ կը մտածեն ժողովուրդները:

Տէ՛ր, որքան շատ են ինձի նեղութիւն տուողները:

Ընթերցուած Առաքեալներուն Գործերէն
ՄՍՏԱԹԻՎՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ (Գործք 1, 15 - 26)

Այն օրերուն, Պետրոս կանգնեցաւ եղբայրներուն մէջ. մօտաւորապէս հարիւր քսան հոգիւնոց բազմութիւն մըն էր եւ ըսաւ անոնց. «Եղբայրներ՛ր, հարկ էր որ կատարուէր գրուածը, զոր Սուրբ Յոզիս կանխաւ ըսաւ Դաւիթի բերնով Յուդայի մասին, որ եղաւ առաջնորդը Յիսուսը բռնողներուն. ան մեր թիւէն ու մեզի հետ էր եւ իրեն ալ վիճակուած էր այս առաքելութիւնը: Իր անիրաւութեան իբրեւ վարձք ստացաւ ազարակ մը եւ մէջտեղէն ուռելով՝ երկուքի կիսւեցաւ եւ աղիքները գետին թափեցան եւ ասիկա յայտնի եղաւ Երուսաղէմի բնակիչներուն, մինչեւ իսկ այն ազարակը իրենց բարբառով կոչուեցաւ Ակեղդամա, այսինքն՝ Արեան Դաշտ: Որովհետեւ Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է. Անոր բնակութիւնը թող ըլլայ աներակ եւ չգտնուի մէկը, որ բնակի այնտեղ: Գրուած է դարձեալ. Անոր պաշտօնը թող ուրիշ մը անէ: Արդ, այս մարդոցմէ, որոնք մեզի հետ եկան շարունակ ամբողջ ժամանակը, երբ Յիսուս մտաւ մեր մէջ եւ բաժնուեցաւ մեզմէ, սկսեալ Յովհաննէսի



Սկրտութենէն մինչեւ այն օրը, երբ վերացաւ, հարկ է որ գտնուի մէկը, որ մեզի հետ ըլլայ վկայ Յիսուսի Յարութեան»: Երկու հոգի ներկայացուցին, մէկը Յովսէփ, զոր կը կոչէին Բարսաբա կամ Արդար, իսկ միւսը՝ Մատաթիա: Յետոյ այսպէս աղօթեցին. «Դո՛ւն, Տէ՛ր, որ սրտագետ ես ամենուն, յայտնէ մեզի, թէ այս երկուքէն ո՞վ ընտրեցիր որ անէ պաշտօնը առաքելութեան, որմէ Յուդա զրկուեցաւ, ասոր տեղը բռնելու համար»: Վիճակ ձգեցին անոնց եւ վիճակը ելաւ Մատաթիայի, որ դասուեցաւ տասնմէկ առաքեալներուն հետ:



Ալելուիա, Ալելուիա,

Ո՞վ Երուսաղէմ, դուն Տէ՛րը օրհնէ: Եւ դուն ալ ո՞վ Սին, քու Աստուածդ օրհնէ: (Սղմ 147, 1 եւ 2)

Ալելուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ (Մարկ 16, 2-8) ՅԱՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան առաջին օրը, առտու կանուխ արեւածագին գերեզման գացին: Անոնք իրարու կ'ըսէին. «Ո՞վ պիտի վերցնէ մեզի՝ գերեզմանի մուտքին քարը»: Իրենց աչքերը բարձրացուցին եւ տեսան որ քարը թաւալած էր եւ շատ մեծ էր: Գերեզման մտան եւ տեսան երիտասարդ մը, նստած աջ կողմը եւ հագած սպիտակ հագուստ, եւ սաստիկ վախցան: Հրեշտակը ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք, գիտեմ, դուք Յիսուս Նազովրեցին կը փնտռէք, խաչուածը. յարութիւն առաւ, հոս չէ: Ահաւասիկ տեղը, ուր դրուած էր: Գացէ՛ք եւ ըսէ՛ք անոր աշակերտներուն եւ Պետրոսի. «Ան ձեզ կը կանխէ Գալիլիա, հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ



ըսած էր»: Անոնք ելան գերեզմանէն ու փախան, որովհետեւ սաստիկ վրդոված՝ կը դողային եւ ոչ մէկուն ըսին, որովհետեւ կը վախնային:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս եւ յաջորդող յիսուն օրերու ընթացքին, մենք՝ հայերս, իրար զիրար ողջունելով միշտ ըսած ենք, կ'ըսենք եւ պիտի ըսենք. «Քրիստոս յարեաւ ի մերելոց, Օրինեալ է յարութիւնն Քրիստոսի»:

«Այո վարդապետ, այս նախադասութիւնը բոլորնիս համար ծանօթ եւ միեւնոյն ժամանակ բոլորին կողմէ օգտագործուած նախադասութիւն մըն է... փոքրուց արդէն իսկ սորված ու մեր մտքերուն մէջ պահած ենք՝ որպէս բաժին մը, եւ կամ գանձ մը՝ մեր դարաւոր գեղեցիկ աւանդութիւններէն...»:

Սիրելի ընթերցող քոյրս եւ եղբայրս, ինչպէս արդէն իսկ գիտենք որ 21-րդ դարը նշանաւոր դարձած է իր աշխար-

հիկ (վաղանցուկ) մակերեսային կենցաղավարութեամբը եւ մտածելակերպովը, սակայն այս վիճակը շատ յաճախ եւ դժբախտաբար կը ներթափանցէ նաեւ մեր հոգեւոր եւ եկեղեցական կեանքէն ներս՝ եւ այդ ալ զանազան ձեւերով... օրինակ՝ այն աղօթքը որ կ'ընենք եւ որ պէտք է մեր հոգիէն բխի, այսօր դուրս կու գայ միայն ու միայն մեր շրթունքներէն:

Սիրելի ընթերցող, մեկնելով այս մտահոգիչ վիճակէն, քու ձեռքերուդ մէջ կը դնեմ հետեւեալ հարցումներն ու մտածականը. «Մի՞թէ ես, նախ որպէս Քրիստոնէայ եւ ետքը որպէս հայ, կը կարողանամ՝ ապրիլ վերելը յիշուած նախադասութիւնը գեթ՝ Ս. Յարութեան ժամանակաշրջանին եւ ի մաս-

նաւորի՝ իմ ամէնօրեայ կեանքիս մէջ...»:

Դիւրաւ կ'ըսեմ Զրիստոս... որ կը նշանակէ Օծեալ, կ'ընդունի՞մ գիւք որպէս Աստուծոյ Օծեալը եւ ընտրեալը որ աշխարհ եկաւ որպէսզի համայն մարդկութիւնը փրկէ եւ կրկին դրախտի փակ դռները բանայ մեր առջեւը:

Դիւրաւ կ'ըսեմ Յարեաւ... որ կը նշանակէ երկնային եւ հոգեւոր յաղթանակ մը՝ որ տարուած է (Զրիստոսի կողմէ) մարմին կամ ֆիզիքականին դէմ: Այսօր, այս ծանր եւ ոչ յոյս ներշնչող վիճակին մէջ, հոգի՞ս է որ կը յաղթէ մարմնիս՝ յոյս եւ վստահութիւնս չկորսնցնելով Աստուծոյ վրայ, թէ մարմնս՝ հոգիիս, յուսահատելով եւ կեանքն ու անոր իմաստը չհասկնալով:

Դիւրաւ կ'ըսեմ ի մեռելոց... բառ մըն է, որ ինքն իր մէջ կը նշանակէ մահ, մեղք եւ վախճան: Ամէն անգամ որ ես այս բառը կ'օգտագործեմ, կը յիշե՞մ որ պէտք է մեղքի եւ մուտք աշխարհէն դուրս գամ... կը յիշե՞մ որ չեմ կանչը-

ւած մեռելու, այլ ապրելու... ապրելու յաւիտեանս յաւիտենից՝ Զրիստոսով եւ անապակ մարմինով, որ պիտի զգենունք երբ Զրիստոս կրկին աշխարհ գայ դատելու՝ ողջերն ու ննջեցեալները:

Դիւրաւ կ'ըսեմ Օրինեալ է... բառ մըն է, որ ցոյց կու տայ ուրախ եւ գոհունակ վիճակ մը: Պահ մը դուն քու անձդ քննէ՛ եւ տե՛ս թէ կեանքիդ մէջ ատելի կը տիրի՞ս քան կ'ուրախանաս, թէ քու կեանքդ ամբողջովին յանձնած ես Աստուծոյ կամքին եւ գիւք կ'օրհնես թէ քու ներդրեանդ եւ թէ ալ քու ուրախութեանդ ժամանակ... ի՞նչն է որ քեզ ատելի կը տիրեցնէ. Օրուան հոգե՞րդ, թէ քու հոգիիդ խեղճ ու մեղաւոր վիճակը:

Ահաւասիկ սիրելի քոյրեր եւ եղբայրներ, ձեր առջեւ կը գտնէք փունջ մը հարցումներ, որոնք կը կարօտին ձեր անկեղծ պատասխաններուն... գտէ՛ք ձեր պատասխանները որպէսզի այս անգամ, եւ ոչ թէ միայն լեզուով, այլ նաեւ մտքով, սրտով եւ հոգիով միասնաբար եւ ուրախութեամբ ըսենք.



Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: eparchy@armeniancatholic.org
www.armeniancatholic.org